

ՀԱՅ

ՄՎԱՌԻՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Բ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍԵ - Խորասանձեան Խան, Թի. 26. Սիրէքի և Պոլիս
ADRESSE - Khorassandjian Han, 26, SirKédji Constantinople

Հեռագրայն ԱՊ. 2146 | ԲԱԺՆԵԳԻՆ | Telephone ՅՏ 2146

Պոլիս և Գալատ Տրկն, ՊՊ. 120
Արսասանիան . . . Տր. 15
Ամերիկա . . . Տր. 150

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

1 ՍԵՊՏ. 1921

ՈՒՐԻՇԻՆ ՕԳՆԵԼ, ՈՒՂՂԱՄԻՏ ԸՂԼՍԼ

Անս երկու գործեր որ կ'ուզենք անենքն առաջ տպոս սոլորսիսն դարձնել: Ասիկա
խաբոխսն է մեր ԳՈՐԾԻՆ և սկիզբը բոլոր յասկուրիսնեանս: ՊԷՏԵՆ ԲԱՌՔԸԼ



LE GÉNÉRAL BADEN-POWEL, LE GRAND CHEF DU SCOUTISME
VIENT VISITER LES CAMPS DES BOY-SCOUTS FRANÇAIS.

Սկսուտուրիսն հիմնադիր Զոր. Պէտրն Բաուել կ'այցելէ ֆրանսական սկսուտներու բանակները:

ԶՕՐ. ՊԷՏԸՆ ԲԱՌԻԸԼ ՍԿԱՌԻՏԻՋՄԻՆ ՄԵԾ ՀԻՄՆԱԴԻՐԸ

ԿՐՅՅԵԼԷ ՖՐԱՆՍԻՅԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

Զօրավար Պէտրն-Բաուրլ, անգլիացի մեծ սկաուտ-պետը, որ նշանաւոր հանդիսացաւ Քրանսօվալի պատերազմին մէջ, Բաուրլի այցելեց :

Հիւսիսի կայարանը զինքը գլխաւորեցին Պր. Mackie, Բարիզի անգլիական ընդհ. հիւպատոս, գնդապետ Hawkins Բարիզի անգլիական երէց զինուորներու պետը, իսկ Ֆրանսացի սկաուտներու կողմէ ընդառաջ գացին արքայ Sevin, ընդհանուր քննիչ հայր Cornette, սկաուտներու հոգեւոր հովիտ՝ իրանոնատոր Lefebvre-Debon և Պր. Jean Loyeau :

Զօրավարին՝ որ սկաուտական տարազ կր կրէր, կը հետեւէին Պ. Lorne և Պ. W. Barclay Հիւսիսային Ֆրանսայի աւերեալ մասերու ամերիկեան յանձնախումբէն, Պր. Henry Marty Ֆրանսացի սկաուտներու պատգամաւոր և Պր. Jessop անգլիացի սկաուտ-քննիչ :

Աչքէ անցնելէ վերջ Ֆրանսայի գանազան սկաուտական գունդերը — որոնց զրօշները սեւով կապուած էին, հրամանատար Maud'huyի իրենց վարիչին մահուան աւիթով — զօրավարը, գանազան պատգամաւորութիւններէ չըջապատուած, ինքնաշարժ մը առաջնորդուեցաւ որ զինքը առաջնորդեց գէպի hôtel Crillon երեք անգամ բարձրացող հաւրախ ազազակներու մէջէն : Այդտեղ Զօր. Պէտրն Բաուրլ հաճեցաւ մ'ը ընդունիլ և իր տեսակէտները պարզել սկաուտութեան մասին :

Յայտարարեց մեզ թէ ինք խիտ մօտէն կը հետեւի սկաուտութեան յառաջդիմութեանը Ֆրանսայի մէջ, ստանալով չարախական տեղեկագրերը : Ազդարարեց թէ ծնողքները, հոգեւոր պիտերը, ուսուցչական մարմինները և պետական ըշխանութիւնները պարտին լաւ բնութիւնը այս կազմակերպութեան (սկաուտութեան) չորս գլխաւոր նպատակակետերը : 1. Զարգացնել պատանիներու նկարագրերը, պարարտելու հոժար մարդիկ որոնք կարող ըլլան նախ և առաջ ինքզինքնուր

օգնել (կամ բաւել), 2. Ֆիզիքապէս զարգացնել զանոնք և առողջացնել անոնց մարմինը, 3. Զանոնք վարժեցնել ձեռագիրտական աշխատութիւններու կատարեալ մարդիկ չլինելու համար, 4. Սովորեցնել անոնց գանազան միջոցներ օւրիշներու օգտակար գանաչու և լաւագոյն քաղաքացիներ ըլլալու :

Զօրավարը տակաւին մէկ բանակում մը միայն այցելեց Ֆրանսայի մէջ և սակայն ատով իսկ ինք կրցաւ աչքի առջև ունենալ թէ ինչպէս Ֆրանսա ինքզինքին կազայ պէտաներէ և պատերազմներէ վերջ :

Արդարեւ, աւելցուց անիկա, այս պատանիները լաւագոյն մեծարանքը բրտած կ'ըլլան իրենց հայրերուն և եղբայրներուն որոնք նահատակուած են պատերազմին ճակատը : Ֆրանսացի մարդիկն իր կը կրթեն սկաուտները ճիշդ անգրանիկ եղբայրներու պէս, որովհետեւ ապագային երկիր մը կառավարելու միջոցն է քաջակերել բարի կամեցողութիւնները :

Ճշտ անգլիացի մարդիկներ Ֆրանսա կուգան, տակայն անոնց նպատակը չէ պարտադրել այս կամ այն վարուելակերպը, այլ օգնել Ֆրանսայի մարդիկներուն՝ լաւագոյն ճամբուն մէջ ընթանալու համար վտանգ եմ թէ ֆրանսացի մարդիկները կարող պիտի ըլլան քիչ առեւնէն ինքնագլուխ գործել և երբ սկաուտութիւնը պիտի ընդհանրանայ ամբողջ զարգացած երկիրներու մէջ, անոնք պիտի աշխատին եղբայրական կապեր մշակել իրենց մէջ, որոնց շնորհիւ վերջապէս վերահաստատուած խաղաղութիւնը աւելի զօրաւոր հիմերու վրայ պիտի հաստատուի :

Արդէն իսկ մէկուկէս միլիոնի թիւ մը կը կազմեն ամբողջ աշխարհի սկաուտները, սակայն այդ կազմակերպութեանէն պէտք է լայն բաժին չառկաւուի նաեւ երիտասարդ աղջիկներուն, որովհետեւ մարդուն նկարագրերը կը կազմուի մօրմէն ստացած դասարարականութեամբ : Գործիչներուն զաւով պէտք է անոնք ալ ընդունին, ինչպէս որ արդէն սկսած են Անգլիոյ մէջ թէ սկաուտութիւնը խաղ մը չէ, այլ լաւ լաւ կազմակերպութիւն մը :

(Le Petit-Parisien)

Handwritten note in the left margin: Մորան և Մորան և Մորան ինչպէս որ և է



ԶՕՐ. ՊԷՏԸՆ-ԲԱՌԻԸԼԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԱՐԵԻԵԼՔ



Ճամբորդութիւնս. — Սկսուա եղբայրներս գուցէ պիտի հետարբքուին լսելով այն յառաջգիմութիւնը զոր կը կատարէ մեր եղբայրակցութիւնը Արեւելքի մէջ, ուսկից՝ կինս, իբր կըրը-կայտերու պեան, և ես՝ կը վերադառնանք քննական ճամբորդութենէ մը:

Այցելեցինք Հնդկաստանը, Պիրմանիան, Աէլլանը, Պաղեստինը և Եգիպտոսը: Մոյն իւրաքանչիւր երկիրներուն մէջ պոյ-սկաստաններ և կըրը-կայտեր դասնք, որոնք մեծամասնութեամբ յաւ կազմակերպութիւններ ունին:

Իւրաքանչիւր կազմակերպութիւն ցոյց տուաւ թէ որքան կը համակրի այն սկզբունքներուն որով պիտի իրադարձուի համաշխարհային շարժումը: Մասնաւոր պատճառներու համար չափազանց կը փոփոխքէին ուժ տալ այս շարժման ծաւալումին:

Բրիտանական կայսրութենէն դուրս գրտնուող երկիրներուն մէջ ամենայատկանշական կէտերէն մին՝ գանազան սոցիալիստներու պատկանող սկսուածական շատ մը խումբերու անպաշտօն՝ բայց և ուրախալի աշխատակցութիւնն էր:

Հնդկաստան. — Հնդկաստանը երկիր մը կը նկատեն, մինչդեռ ան ճշմարիտ աշխարհ մըն է, ուր կը բնակին տարբեր լեզուներով, սոյնորութիւններով, տարազներով, և տարբեր դասանանքներով, դասակարգերով, յատկանիւրերով շատ մը ժողովուրդներ: Հան կային բրիտանացի, անկլօ-հնդկի և հնդկի սկսուածներ, բայց ամէնքն ալ գլխաւոր կազմակերպութեան չէին պատկաներ: Ընդհանրաւոր կային 6-8 տարբեր կազմակերպութիւններ միայն հնդկիներէ և իմ ճամբորդութեանս նպատակներէն մին էր այս տարբեր տարբեր միացնել միակ կազմակերպութեան մը մէջ, վասն զի միայն ուղղամիտ և միացեալ գործունէութեամբ և ոչ թէ անջատ և պատահական ճիւղերով կարելի է յաջողիլ այս խոչոր ձեռնարկին մէջ:

Բազմաթիւ ճիւղերու պետերու միջեւ մտածումի և իտէալի շատ մը տարբերութիւններ գոյութիւն ունէին. բայց լայնախոհութեամբ և սկսուածական գաղափարով անոնք երկրորդական վէճերը թողուցին և լոկ ժողովուրդին

օգտին հիմնական հարցով զրաղեցան: Այսպէս յաջողեցան և կազմեցին միակ բնկերութիւն մը որուն իբր անմիջական արդիւնք, շուրջ 20,000 նոր անդամներ եկան միանալ հնդկական շարժումին, և այս թիւը անշուշտ պիտի աւելնայ արագօրէն այն չափով՝ որքան եզրայրակցութեան ազնիւ իտէալները աւելի լաւ ձանչցուին և գնահատուին այդ աշխարհը բնակող 300 միլիոն ժողովուրդին կողմէ:

Պիրմանիա. — Պիրմանիոյ մէջ պայծասները Հնդկաստանի նման էին. միայն թէ այս երկիրը փոքր է, ցեղի և դասանանքի նուազ անհամաձայնութեամբ: Միայն 3000 Պիրման և Անդլիացի սկսուածներ կան. բայց կը խոստանան արագօրէն յառաջդիմել քանակով և որակով: Տղոց խառնուածքը կը տարբերի Հնդկաստանցիներէն: Աւելի գուարթ և ուրախ են. դրեթէ բոլոր երիտասարդները ժամանակ մը վանականի կեանք կը վարեն, և այս կարգապահութիւնը կ'ընդլայնէ և կը զարգացնէ իրենց մէջ ուրիշ ծառայելու գաղափարը, ինչ որ պէտք է հիմնէ տարբ մը՝ որ ըլլայ շատ օգտակար ասպագայ ծրագիրներուն:

Աէլլան. — Անուաւակ փոքր երկիր մը, աւելի խիտ, բարգաւաճ, խաղաղ և զեղեցիկ, ժողովուրդը աւելի դատարարակուած և իր կեանքէն աւելի գոհ է, բայց ՚ոս ինչպէս նախ ալլուր, այս շարժումը պէտք է բնդլայի ել, դպրոցներու դպրոցական կրթութենէն անդին:

Պայեսիս. — Պաղեստինի մէջ նորակազմ ազգի մը հրապուրիչ դասը աւելնք. հան կային Արաբ, Յոյն, Իտալացի, Հայ, Բրիտանացի և Հրեայ սկսուածական խումբեր. կար նաեւ կ'ըրկայտեր՝ Հրեայ կըրը-սկսուածներու կողքին:

Յոյց մը կատարող 1000 ազանները, արձանագրուած սկսուածներուն 1/3 ր կը ներկայացունէին, վասն զի շուրջ 2000ր բացակայ կ'ըլլար բանակումի մը ժամանակ կամ այլուր:

Պէտք է խոստովանիլ որ ճշմարիտ գաղափարը կը տիրէր իրենց գործունէութեանց մէջ և այդ գաղափարին գոյութիւնը մեզ կը յուսադրէ ասպագայ ազգի մը կորիզը կազմող դասնազան տարբերութիւն աշխատակցութիւն մը և վերջնական համակրութիւն մը յառաջ գալուն:

Եգիպտոս. — Եգիպտոսի մէջ ալ ներկայացու համանման խնդիր մը որքան որ տարբեր էր: Զանազան ազգերը — Իտալացի, Յոյն, Հայ, Ֆրանսացի, Բրիտանացի, Արաբ, Ապաի, Եգիպտացի — ունէին իւրաքանչիւրը իր սեփական սկսուածական խումբը, և անոնք՝ զիս բնդու-

նելու համար հաւարուեցան և միացան, առանց սակաւն ուրիշ ու է յարարերական կազակցութիւն մը ունենալու վերջնական կազմակերպութեան մը առի :

Օտար ազգերու անդամները անշուշտ իրաքանչիւրը իրենց երկրին հովանիին տակ կը մանէին . բայց և այնպէս չստիպանց պէտք կայ եզրագատի մէջ կեդրոնական կազմակերպութեան մը, վասն զի հոն առ նուազն 4-5 սկառտական ազգային կազմակերպութիւններ գոյութիւն ունին . բաւական ուժեղ և իւրաքանչիւրը անկասարար աշխատելով :

Բայց կը յուսամ որ իմ այցելութեանս արդիւնքներէն մին պիտի ըլլայ զանոնք միացնել, և յատկ ըրել երկրին բարիքին համար աշխատող տիրապետող ուժ մը :

Գաստաւակիչ արժեք. — Մեծ հաճուքով զարմացայ այն ուժին, կարողութեան, ուշիմութեան և գողտխարին զորս ունին այս գանաղան երկիրներու սկառտները . զարմանալի չէ որ մի քանի տեղեր, կազմակերպողները սկառտութեան հողէն աւելի ձեռականին յարած են, և ասիկա վասնզ մըն է որուն ենթակայ են բոլոր սկառտական նորակազմ կազմակերպութիւնները :

Գիտութիւնը առանց հիմի և նկարագրի խախտու է, գաստարակիչները ընդհանրապէս հասկցան և ճանչցան այս ճշմարտութիւնը և սկառտ մարզերուն մէջ տեսան նկարագրի զարգացնող մեթոտիկ գրական միջոց մը :

Արդէն ամենաճշմարիտ հայրենասէրները գիտեն թէ երիտասարդ երկիրներու մէջ, ազգերու վերածնունդի ուղիին վրայ միշտ վասնզներ կան՝ եթէ քաղաքական անձնաւորութիւններ գործի գլուխ անցնին : Ասոնք որքան որ ճարտասանի յատկութիւններ ունենան, կարող չպիտի ըլլան նկարագրի տեսակէտով ազգը առաջնորդելու :

Նկարագրի ուրեմն հոս ունի անագին և չափազանց կարեւոր արժէք մը :

Կրթ կայտեր. — Փայով կրթ կայտերու շարժման, ակներեւ է որ Արեւելեան երկիրներու մէջ, սոյս-սկառտներու շարժումէն աւելի զանդազ և աւելի ուշ ընդլայնի :

Սակայն և այնպէս իւրաքանչիւր երկրի մէջ գոյութիւն ունէր ան և կը խոստանար տարածուել և կատարել մեծ բարիք մը՝ գանաղան գեղերու՝ ապագայ կիներուն և մայրերուն համար :

Այս շարժման սկզբնաւորութեան ժամանակ փորձուած գանաղան գրութիւնները կը հաս-

տատեն մեր սկզբունքները, որով դեռաօր ազջիկներու գաստարակութիւնը և կազմակերպութիւնը պէտք է սոցոց կազմակերպութենէն բոլորովին տարբեր ձեւքերու մէջ զնել, որքան որ կարելի է երկու կողմի պետերու միջեւ ըլլալիք աշխատակցութիւնը, որպէս զի երկու շարժումներուն ապահովէ պիտանի զօրաւոր և նեցուկը :

Մի քանի վայրերու մէջ սխալ մը ըրած էին իրան կրթութիւն մը և կազմակերպութիւն կատարել փորձելով, որը՝ առանց յատկապէս գաստարակուած պետերու, վասնզ գաւոր փորձաւորութիւն մըն է, որ կրնայ արդարեւ որդոզեցնել ծնողները և հասարակութիւնը՝ ամբողջ շարժման դէմ :

Սկաստ խմբագրութիւնը. — Գործին այն տկար կողմը՝ որով բոլոր երկիրներու մէջ կը տառապի շարժումը . սկառտ-խմբագրութեան զայն լատկերպով չհասկնալով և խռատին իսկական բարեւոյսին պակասին պատճառով :

Շատ դժուար է սորվեցնելը միայն անգլիներէն զլրբերով, և մտածել որ օտարներ են, նկարագրով և շրջանակով բոլորովին տարբեր :

Գրեթէ բոլոր կազմակերպութիւնները իրենց սկառտ խմբագրութեան համար աւելի կատարելալ գաստարակութեան մը պէտքը կը շեշտեն, քանի որ ան է առաջին քայլը դէպի ճշմարիտ յաջողութիւնը :

Մենք, այս նպատակու մեր ամէն կարելի ճիգը կ'ընենք, մեր բանակա-վարժարանին մէջ ընդունելու համար գանաղան երկիրները ներկայցնող պետեր, և այս կեդրոնէն պատրաստ ենք զրկելու վարժ գաստարակիչներ այն երկիրներուն որոնք պէտքը կը զգան :

Սակայն անգամ մը իրականացնել վերջ, պիտի կարենանք սպասել սկառտիկութեան տարածումը իր ճշմարիտ ուղղութեանը մէջ :

Բայց, ասիկց գատ, պարտինք աւելի ընդարձակ արդիւնք մը յուսալ, այն է՝ մեր եզրայրակցութեան աւելի տարածուելը և մղումը, որով մեծապէս պիտի սատարէ հաստատելու համար աշխարհի խողազութիւնը :

«ՃԼՄԳՐԻ»
ՊԵՏԻՆ ԲԱՅԵՂ,
Թարգմ. ՉԱԷԼԻՆ ՅԱԵԼԻՆԵՆ
(Խզիլի)





Ատանայի սկսուածները ճաշի միջոցին

ԻՆՉ Է ՍԿԱՌԻՏԻՉՍԸ

Ասկէ երեք չորս ամիտ առաջ, Անդլիոյ գահաձառանգ՝ Կալլէսի իշխանը, որ միեւնոյն ատեն պեան է Կալլէսի սկսուածներուն, «Տէլիթէլէկրաֆ» օրաթերթին մէջ կոչ մը ուղղած էր ժողովուրդին, երկու հարիւր հազար Անգլիական ոսկիի վիթխարի գումար մը հաւաքելու համար, ի նպատակով իրաւանական Սկսուածներու Միութեան:

Թէ Անդլիոյ թէ գաղթավայրերուն մասուլը և ժողովուրդը մեծ խանդավառութեամբ ընդունեց այդ կոչը, և անոր լծուեցաւ իբր կենսական ստիպողականութիւն ունեցող գործ մը:

Ատիկա փայլուն կերպով կ'ապացուցանէ սկսուածի գծին որ աստիճան լուրջ և օգտակար կազմակերպութիւն մը ըլլալը:

Բարեբաղդութիւն մըն է, որ մեր մէջ ալ սկսած է հեռոջեան գնահատուիլ սկսուածութիւնը և խիստ քաջալերական տեսնել անոր յառաջընթացութիւնը սա վերջին տարուան շքրջանին. բնականաբար նկատի ունենալով անոր նորութիւնը և մանաւանդ այն դժնդակ պայմանները որոնց մէջ ան կը պայքարի ոչ միայն ինքզինքը պահելու, այլ ըստ կարելւոյն յառաջընթաց համար:

Նախ տեսնենք թէ ինչ է այս համաշխարային կազմակերպութիւնը, հիմնուած 1907 ին պեան-Սկսուած Սքր Ռոպլըթ Պէտրն Բաուրի ի կողմէ, իր սեփական յղացումով, և անոր անխնայ աշխատութեան շնորհիւ հասած իր այսօրուան դիրքին:

Կազմակերպութիւն մըն է ան, որ կը

կը ձգտի իր մէջ ունենալ բոլոր աշխարհի պատանութեան կարելի եղածին չափ ուսուար մասը, և որուն նպատակն է, ընդհանուր ամամբ, այդ պատանիներու սրտին մէջ մշակել ինչ որ բարձր, պատուաւոր, մաքուր, բարի, ազնիւ և անկեղծ է:

Այս յատկութիւնները պատանիին մէջ հեռոջեան կը զարգանան դաստիարակութեամբ կարգապահութեամբ և բացօգեայ բնութեան մէջ զանուշ հազարամէկ հրահանգիչ իրերու ընտելութեամբ:

Ամէն սկսուած պատուոյն վրայ կ'երդնու գէպի Աստուած և դէպի իր հայրենիքը ունեցած պարտականութիւնը կատարել, ամէն կերպով օգնել ուրիշներուն և հնազանդել իր վերայ նշանակուած պետերուն:

Մէկ խոսքով իր գաւառնանքն է «ՍԻՊ», «ԾԱՌԱՅՅՈՒԹԻՒՆ» և «ԳՈՒԹ», ընդդէմ ասուլութեան, անխղճութեան և կործանումի դաւանանքին, որ համաձայնի մը պէս կը արիւն աշխարհի մեծագոյն մասին մէջ:

Շատ պարզ են այն միջոցները, որոնցմով սկսուածի գծը կը ձգտի ձեռք բերել իր նպատակը: Իրենց տարիքին համեմատ և մարդուած պետերու հրամանին տակ, պատանիներու խմբակներ և խումբեր կը կազմուին: Երեւակայութիւնը և վերացականութիւնը—բաներ որոնց վրայ շատ անգամ ծագրանքով կը նայուին և որոնք իրականին մէջ գեղեցիկ յատկութիւններ են, կը քաջալերուին այդ տղայ սրտին մէջ, և անոնց կ'ուսուցուի սիրել և որոնել ազնիւ և ատկետական արկածախնդրութիւնները: Երբնմայ սկսուած հաւատարմութիւն և ուղղամտութիւն կը սորվի հաւատարմութիւն դէպի իր Արարիչը, դէպի իր հայրենիքը, և ուղղամտութիւն դէպի իր նրմանը, դէպի անկեղծ, դէպի տառապողը:

Ահա այս է սկսուածութեան գլխաւոր նըշանաբանը, որուն բարձրութեան վրայ տարակարծութիւն չը կրնար գոյութիւն ունենալ:

Հիմա տեսնենք թէ ինչ ըրած է սկսուածութիւնն մինչեւ այսօր:

Հազարաւոր մաքուր, պարկեշտ և քաջաօրոտ քաղաքացիներ հասցուցած է ան, մարդիկ որոնք գուցէ դատապարտուած էին մեծ մասամբ աննկարագիր և թող արարածներ ըլլալու:

Վերջին պատերազմին մէջ, տասնեակ հազարներով Անդլիոյցի ցամաքային և ծովային սկսուածներ իրենց լաճիքը բերին հայրենիքի պաշտպանութեան գործին մէջ: Աւելի քան հա-

բիւր հազար նախկին սկաուտներ և պ'տեր գրոջի տակ ծառայեցին և անոնցմէ տասը հազարը հերոսաբար ինկան հայրենիքին համար, իրենց պարտականութիւնը լիութի կատարելով: Վիրապրող նախկին սկաուտներէ շատերը մեծամեծ գնահատութիւններու արժանացան իրենց ցոյց տուած մասնաւոր յատկութիւններուն համար: Հոս կ'արժէ յիշել անունը Անդրիայի ծովային զինուորի մը, «Տօք Քորնուէլլը», նախկին սկաուտ մը, որ «Չէսթրը» գրահաւորին վրայ մահացու կերպով վիրաւորուած, չը թողուց որ զինքը փախադրեն նաւուն հիւանդանոցը և կառչած մնաց իր թնդանօթին յայտարարելով թէ չզուցէ իրեն պէտք կ'ունենան»: Ատիկա միայն մէկ փոքրիկ նմոյշն է այն հազարաւոր հերոսութիւններուն որ ամէն ազգի սկաուտներուն ցոյց տուած անունն օգտակարութիւնն է որ զորեց կայլէսի իշխանը զըլտիս կենարու այդ կազմակերպութեան ֆօնտ մը ապահովելու գործին:

Մենք որ այնքան շատ պէտք ունինք մեր ուժերը հուսաքելու, գերբնային ըլլալու, կարենայ կործք տալու համար մեր ներկայ և յառաջիկայ գոյամարտին մէջ, որքան աւելի պէտք է պատրաստուինք, զարգացնելով մեր սակաւամիտ բայց առիւծանման պատանիներուն ֆիզիքական և բարոյական ոյժը: Աէտք է ամէն առիթ տանք մեր սկաուտներուն «բարձրանալու» որպէսզի անոնք ալ յառաջիկային կարենան «բարձրացնել» մեր ազգային խոէալը:

Միայն պէտք է հասկնայ մեր իրօքը, ըսկաուտիզմի սկզբունքը երբեք պատեւազանական նակուսներ չ'ունի իր մէջը, ընդհակառակը, եթէ սկաուտի առաջնորդող դասանանքը տիրապետէր, երբէք պատերազմ տեղի չ'էր ունենար:

Սկաուտութեան առաջին նպատակը, ինչպէս բոսնիք, մարդոց զիրար սիրել սորվեցնել է, և այդպէսով արգիլել պատերազմը որ հետեւանքն է ատելութեան: Ան կուզէ համախմբել իր ուժերը, եղբայրական սերտ կապով մը իրարու մօտ բերելով հայրենիքին բոլոր գաւաղները: Հատմէական հին նշանաբանն է անոր ընդգրկածը «խաղաղութիւնը ապահովելու համար պատերազմի պատրաստ եղիր»:


Մասնաւորաբար պէտք է զգուշանայ ներքին մանր մունր պատերազմներէն, որոնք եթէ չը կասեցուին, կործանարար կը դառնան: Ատոնց մէջ ամէնէն զարհուրեցիկն դասակարգային ատելութիւնն է, որ այս միջոցիս աներեւակայելի աւերներ կը գործէ հսկայ Ռուսիոյ մէջ:

Մեր մէջ ալ դժբաղդաբար պակաս չ'են կուսակցական տխուր պայքարները, որոնք կործանարար հետեւանքներ կ'ունենան մեր սիրելի հայրենիքին և դժբախդ ազգին համար:

Իրերու այս վիճակին մէջ մեզի ըսփոփանք մըն է տեսնել որ սկաուտը այդ վարդապետութեան չի հետեւիր: Մեր սկաուտներու անձին մէջ մինք կը պատրաստենք նոր սերունդ մը, տարբեր մտայնութեամբ և տարբեր ոգիով սնած: Անոնք վաղուան պարկեշտ քաղաքացիները պիտի ըլլան, անոնք օրէնքի և կրօնքի երդուեալ պահապաններն են:

Նկատի ունենալով սկաուտին բարձր կոչումը, ամէն անհատի պարտականութիւնն է սատարել այդ կազմակերպութեան յառաջգիմութեան և աշխատել կարելի եղածին չափ ստուարացնելու հոյ Սկաուտներու թիւը, իրենց աղաքը առանց բացառութեան մտցնելով անոր շարքերուն մէջ:

ՕՍՆԻԿ ԳՈՎԱՆՆ



Իզմիրի սկաուտները

